

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ԱՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով

կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված 2010-2014 թվականների սերմնաբուծության և սերմարտադրության ծրագրի շարունակականությունը ապահովելու, 2012 թվականի բերքի տակ ցանելու համար արտերկրից հանրապետություն և մարզ ներկրվող էլիտար աշնանացան ցորենի սերմը 7 և ավել հեկտար վարելահող ունեցող և վարձակալված տարածություններում մշակելու, վարելահողերի մշակություն պահանջվող ագրոտեխնիկական պահանջները ապահովելու, տեղերում մոնիտորինգ իրականացնելու համար ստեղծել մասնագիտական աշխատանքային խումբ հետևյալ կազմով.

- Գրիգորյան Ա. - մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի վարիչ - Վարդենիսի տարածաշրջան
- Խալաֆյան Ա. - մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի վարիչ - Վարդենիսի տարածաշրջան

Ղազարյան Ս. - մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի գլխավոր մասնագետ - Գավառի տարածաշրջան

Մարգարյան Գ. - մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի գլխավոր մասնագետ - Սևանի տարածաշրջան

Ջրաղացպանյան Ա. - մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի գլխավոր մասնագետ - Մարտունու տարածաշրջան

Բաղեյան Ռ. - մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի առաջատար մասնագետ - Ճամբարակի տարածաշրջան

2. Աշխատանքային խմբին՝

1) տեղերում ուսումնասիրել և խնդիր դնել ապահովելու հողերի մշակության ագրոտեխնիկական կանոնները, հողամասի չափը, ջրովի, անջրդի և նախորդ մշակաբույսի իսկությունը.

2) ստուգել վարելահողերի սեփականության կամ վարձակալության փաստաթղթերի առկայությունը:

3. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Վ. Հովհաննիսյանին:

ՄԱՐԶՊԵՏ՝

Ն. ՊՈՂՈՍՅԱՆ